

պատվիրեաց լաւ հարկիք առնել վարդապետին: Իսկ Վարդապետն դարձեալ ուղարկեց եւ ասէ. «Ընդէ՞ր ոչ առնու. միթէ ո՞չ հաճեցաւ կամ թէ իւր լայեխ չէ՞ զի շնչին եւ ոչինչ է մեր տուրքն սակաւ: Ապա հազիւ էառ զխաչն. զբանգահրն եւ զայլն յետ զրկեց»:

Կաթողիկոսի նամակին սկզբնագիրը չէ յայտնուած տակաւին. բայց լատիներէն թարգմանութիւն մը, կատարուած Բարթոլոմէոս Արզարի իտալերէն թարգմանութեան վրայէն, ւաւանդած է մեզի A. Bzovius<sup>12</sup>: Մեղքիսեղեկ հոս կը հիւսէ Պօղոս Ե. ի գովութիւնը, կը փառաբանէ Ս. Աթոռին ճոխութիւնն եւ կը յայտնէ իւր հպատակութիւնը Հռոմայ Գահին: Ի մէջ այլոց կը գրէ կաթողիկոսը. «Որպէս Արեգակն սկիզբն է մարդկային կենաց եւ ամենայն կենդանեաց, այսպէս եւ Դուք, վէ՛մ կենդանի կենդանարար հաւատոց՝ բազմեալ յԱթոռ զսկիզբն կենաց ամենայն հաւատացելոց շնորհէք, այնու իսկ՝ զի ի զիրկս ձեր զան ժողովին համօրէն ազգք քրիստոնէից, քանզի գրեալ է. Ի վերայ այդը վիմի շինեցից զեկեղեցի իմ: Եւ որպէս արե-

<sup>12</sup> Abraham Bzovius, Pontifex Romanus. Coloniae Agrippinae, 1619, էջ 202—205. Նոյնը յառաջրեքուած նաեւ նոյն հեղինակին հետեւեալ գործին մէջ՝ Paulus Quintus Burghensius P. O. M., Romae 1612, էջ 43—52. Տե՛ս քաղուածարար՝ Stephanus Azarian, Ecclesiae Armenae traditio de Romani Pontificis primatu iurisdictionis et inerrabili magisterio. Romae 1870, էջ 113—121. Հմմտ. եւ Հ. Ա. Պալճեան, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս, էջ 161: